

ԲԱՆԿԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Է. Է. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հաշվի առնելով տնտեսության մեջ առկա որոշ երևույթներ՝ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը լուրջ մտահոգություններին տեղիք է տալիս: Այդ մտահոգություններն ավելի են մեծանում, երբ փորձում ենք կանխատեսումներ կատարել առաջիկայում սպասվող տնտեսական արդյունքների մասին: Մեր ասելիքը հստակ դարձնելու համար ստիպված ենք դիմելու ՌԴ օրինակին, քանզի այսօր Հայաստանի տնտեսությունը ըստ էության տառապում է այն նույն հիվանդությամբ, ինչ ՌԴ տնտեսությունը 1998 թ. «սև օգոստոսից» առաջ: Ինչ խոսք, մենք հենց այնպես չենք ընտրել ՌԴ օրինակը, որովհետև գաղտնիք չէ, որ Հայաստանի տնտեսությունը բազմաթիվ թելերով կապված է նրա հետ և այնտեղ կատարվող ամեն մի քիչ թե շատ ուժեղ ցնցում իր արձագանքն է գտնում Հայաստանի տնտեսության մեջ: Ծիշտ է, Հայաստանի որոշ մասնագետներ ՌԴ ճեղքածամից հետո շտապեցին հայտարարել, թե այն չի ազդել և չի էլ կարող ազդել մեր տնտեսության վրա, բայց պարզից էլ պարզ էր, որ նման հայտարարությունները չէին բխում մեր տրնտեսության վրա հնարավոր ազդեցությունը գնահատելու ցանկությունից, այլ հետապնդում էին ինքնապաշտպանական նպատակներ: Իրականում ՌԴ ճգնաժամը ոչ միայն ազդեց Հայաստանի տնտեսության վրա, այլև էապես գերազանցեց սպասվող ազդեցության չափերը: Անշուշտ դա տեղի ունեցավ ուղղակի և անուղղակի ձևերով, և այդ բոլորը հաշվարկել հնարավոր չէ, ուստի մշե ենք միայն դրանցից առավել ակնհայտները:

1. Էապես նվազեցին՝ Ռուսաստանից Հայաստան կատարվող մասնավոր տրանսֆերտները, որոնք, լինելով բնակչության գործադուրկ հատվածի եկամտի հիմնական աղբյուրը, խիստ սրեցին սոցիալական իրավիճակը: Բնակչության գնողունակության անկումը, բնականաբար, բացասաբար անդրանդարձավ պահանջարկի շուկայի և շուկայական գնողունակության վրա:

2. Եթե մինչ այդ էլ ոռուսական կապիտալի ներհոսքը Հայաստան իրականանում էր համեմատաբար փոքր չափերով, ապա ճգնաժամից հետո այն էլ ավելի նվազեց, ըստ այդմ նվազեց նաև ՀՀ տնտեսության մեջ ՌԴ ներդրումների ծավալը, որը բացասաբար անդրադարձավ ծրագրավորված մակրոտնտեսական ցուցանիշների և հատկապես ՀՆԱ-ի աճի տեմպերի վրա:

3. ՀՀ մի շարք առևտրային բանկեր, թղթակցային հաշիվներ ունենալով ոռուսական բանկերում, վերջիններիս սննկացման հետևանքով կրեցին մեծ վնասներ, իսկ դա լարվածություն ստեղծեց ՀՀ բանկային համակարգում ռետուրների առկայության և դրանց տնօրինման տեսակետից:

Հայտնի է, որ Հայաստանում ներկայումս գործող մի շարք առևտրային բանկեր գտնվում են անմխիթար վիճակում, և նրանք սպառնում է սննկացման վտանգը: Անցած 2 տարիների ընթացքում բանկային համակարգում գործող 29 բանկերից 8-ը այժմ գտնվում են սննկացման եզրին, և այդ բանկերում գործում են կԲ-ի կողմից նշանակված ժամանակավոր ադմինիստրացիաներ, որոնց նպատակն է դրանց առողջացման արդյունավետ ճանապարհներ գտնել, հսկառակ դեպում կհետևի օրենքով նախատեսված լուծարման գործընթացը: Եվս մի քանի բանկեր գտնվում են սննկացման նախաշեմին, այսինքն՝ նույն իրավիճակում, ինչ որ նշված 8 բանկերը 2-2.5 տարի առաջ: Հարկ է նշել, որ վերջիններիս թե՛ մեծության և թե՛ տնտեսության մեջ ներգրավվածության առումով թածին է ընկնում բանկային համակարգի ակտիվների մոտ 40%-ը, որը բավականին մեծ և անհասնազուտացնող ցուցանիշ է: Իսկ որո՞նք են այս իրավիճակի պատճառները: Անցած 9 ամիսների ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կանոնադիր հիմնադրամը ավելացել է՝ 29.5 մլրդ դրամից հասնելով 32.8 մլրդ դրամի, իսկ բանկերի ընդհանուր

¹ Տարբեր գնահատումներով՝ 4-6 անգամ:

² Մանրամասն տե՛ս «ՀՀ կԲ տարեկան հաշվետվություններ» Եր., 1998:

³ Մանրամասն տե՛ս «ՀՀ կԲ տարեկան հաշվետվություններ» Եր., 1999:

դրամագույնը կամ, որ նույնն է, սեփական միջոցները 33.6 մլրդ դրամից նվազել են մինչև 20.3 մլրդ դրամ: Սա նշանակում է, որ բանկային համակարգը ոչ միայն փոշիացրել է բաժնետերերի ներդրումները, այլև, ի հաշիվ ավանդատուների և հաճախորդների բանկային միջոցների, ունեցել է մոտ 12.5 մլրդ դրամ կորուստ: Միայն 2001թ. 9 ամիսների ընթացքում բանկերի կրած վնասը կազմում է 20 մլրդ դրամ: Ըստ այդմ ներկայումս ծագել են հետևյալ խնդիրները.

- չվճարումների հետևանքով լարվածություն է ստեղծվել տնտեսական ոլորտում,

- հիվանդ բանկերը անկարող են հետ վերադարձնել բնակչությունից ներգրավված ավանդները,

- տնտեսության մեջ նվազել է վարկային ներդրումների վերադարձելիության աստիճանը: Տնտեսության մեջ կատարվող այս բացասական երևույթները բնավ պատահական չեն և պայմանավորված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով: Դրանք են՝

- բանկային կապիտալի ոչ արդյունավետ ներգրավվածությունը տնտեսության մեջ, ինչը պայմանավորված է բարձր ռիսկայնությամբ և վարկային ներդրումների ոչ ճիշտ, չհիմնավորված հաշվարկներով և կառավարմամբ.

- պարտադիր պահուստավորման գործող սահմանաչափը (8 տոկոս) բացասական ազդեցություն է ունենում բանկային և ֆինանսական համակարգի վրա: Պահուստավորման նորմատիվի պահպանումը և դրա խախտման համար կհասանելի սահմանափակումները խուսափելի չեն բանկերի համար դարձել է գերխնդիր, քանզի ներկա պայմաններում խիստ դժվար է հիշյալ կարգի պահպանումը թեկուզև զուտ ռեսուրսների առկայության տեսակետից: Եթե սրան ավելացնենք նաև այն, որ առանձին բանկեր ներկայումս իրականացնում են միլիոն դոլարի հասնող նպատակային ծրագրերի ֆինանսավորում (Լիմսի հիմնադրամ, «Եվրագիս» հիմնադրամ, գյուղատնտեսության զարգացման ծրագիր), ապա միանգամայն հասկանալի կդառնա, որ պարտադիր պահուստավորման նորմատիվի պահպանումը նույնիսկ առողջ բանկերի համար դառնում է դժվար իրագործելի: Ներգրավված դրամական միջոցների դիմաց պահուստավորման 8% դրույքաչափը բավական երկար ժամանակ անփոփոխ է մնում: Նման դրույքաչափը թերևս մի քանի տարի առաջ, երբ ՀՀ տնտեսության մեջ առկա էր սղանի բարձր մակարդակ, կարելի էր համարել տրամաբանական ու արդարացիված, իսկ ներկայումս սղանի ցածր, անավա կտրվածքով նույնիսկ զրոյական մակարդակի պայմաններում այն մեծապես դժվարացնում է բանկային գործառույթներ իրականացնող սուբյեկտների գործունեությունը, քանի որ շուկայական տոկոսադրույքների նվազմանը զուգընթաց թանկացնում է ձեռք բերվող պարտավորությունների գինը:

- վարկային ներդրումների մեծ ռիսկերը և վարկային միջոցների մեծածավալ չվերադարձելիությունը բանկերին ստիպում են իրենց միջոցները տեղաբաշխել պետական պարտատոմսերում: Դա, իհարկե, համարվում է համեմատաբար ցածր ռիսկային գործիք, սակայն պետական պարտատոմսերի տոկոսադրույքների իջեցմանը բանկերը չեն կարողանում համարժեք արձագանքել, քանի որ կապիտալի շուկայի բացակայության պայմաններում չկա համարժեք այլ ներդրում կատարելու հնարավորություն, և բանկերի ներգրավված միջոցների ու պետական պարտատոմսերի տոկոսադրույքների տարբերությունը մի շարք բանկերում զրոյական է, երբեմն նույնիսկ բացասական:

- Բանկային գործունեության մեջ բացակայում են այնպիսի կարևոր ինստիտուտներ և ենթակառուցվածք, ինչպես, օրինակ, ավանդային գումարների ապահովագրման մեխանիզմը, առանց որի բնակչության մոտ գտնվող ազատ դրամական միջոցները անհնար է ուղղել դեպի բանկային համակարգ:

Խոսելով վերը նշված թերությունների մասին, չի կարելի անտեսել նաև Հայաստանում միջբանկային արժույթային շուկայի թերությունները: Հայտնի է, որ բանկերը իրենց բանկային օրը սկսում են ՀՀ կհ պաշտոնական փոխարժեքի հրապարակմամբ, որը ուղեցույց է ծառայում սեփական փոխարժեքի որոշման համար: Սա արդեն վկայում է ընտրված փոխարժեքի ռեժիմի ոչ ճիշտ գործունեության մասին: Բանկային փորձից հայտնի է, որ շաբաթական կատարվող բանկային գործարքների ծավալը հասնում է մի քանի տասնյակ միլիոն դոլարի, սակայն ձևավորված փոխարժեքի վրա հեշտությամբ հնարավոր է ազդել և փոփոխել այն՝ շուկայում ներկայացնելով ընդամենը 200-300 հազար դոլարի հայտ: Սա հետևանք է այն բանի, որ շուկայում գործող սուբյեկտները զրկված են արտարժույթի արբիտրաժ և սպեկուլյացիա կատարելու տնտեսապես հիմնավորված մեխանիզմի հնարավորությունից⁴: Արժեք նշել նաև, որ ներկա փոխարժեքի

⁴ Է. Սանդոյան, Ա. Քառյան, Բարեփոխումների արդյունքները և դրանց հետագա համակարգման հիմնական խնդիրները, «Հիմունիկա», № 3, 2000, էջ 13-21:

մակարդակը չի համապատասխանում տնտեսության իրական զարգացածության մակարդակին, և խիստ հրատապ խնդիր է դրանց համապատասխանեցումը, որը հնարավոր է անել՝ իջեցնելով շուկայական փոխարժեքը⁴: Այս ամենին կարելի է ավելացնել նաև բանկային համակարգի սկզբունքորեն վատ կառավարումը:

Վերը ասվածից հետևում է, որ ներկայումս ՀՀ բանկային համակարգը գտնվում է ցմամատիպ վիճակում, ինչ ՌԻ բանկերը 1998 թ. նախաօգոստոսյան ժամանակաշրջանում, ուստի եթե չենք ցանկանում, որ ՀՀ-ում տեղի ունենա ՌԻ օգոստոսյան ճգնաժամին համանման ճգնաժամ իր բոլոր հետևանքներով հանդերձ, անհրաժեշտ է մշակել համալիր միջոցառումների այնպիսի համակարգ, որի կենսագործումը հնարավորություն կտա իսկապես խուսափել համանման ճգնաժամից: Մեր կարծիքով, ՀՀ ներկայիս տնտեսական քաղաքականությունը ճշգրտելու և սպասվող ճգնաժամից խուսափելու համար անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

- ներկա փոխարժեքի մակարդակի սահուն, անցնցում և վազեցում, ինչը կնպաստի տնտեսության մեջ չվճարումների կրճատմանը:

- ՀՀ ԿԲ կողմից սահմանված պարտադիր պահուստավորման դրույքաչափի նվազեցում մինչև 3-4%: Սա բանկերին հնարավորություն կտա օգտագործվող ռեսուրսները կառավարել ավելի ճկուն ձևով:

- Բանկային վերահսկողության նորմատիվային դաշտի թուլացում՝ ի հաշիվ վարչարարության ավելի խստացման, որը բանկերին հնարավորություն կտա խուսափելու իրենց տնօրինած առանց այդ էլ սուղ միջոցների հաշվին կիրառվող պատժատուգանքներից:

- Բանկային օրենսդրության արմատական վերանայում՝ համապատասխանեցնելով առկա տնտեսական չափանիշներին և տնտեսության զարգացածության մակարդակին:

- Հետաձգել բանկերի դրամազլխի պարտադիր համալրման 5 մլն դոլար սահմանաչափի ժամկետը, այլապես բանկերի դրամազլխի մինչև 2005 թվականը 5 մլն դոլարի համալրման պահանջը «Բանկային ամուսնության մասին» հատուկ օրենքի բացակայության պայմաններում կհանգեցնի մի շարք կայացած բանկերի գործունեության դադարեցմանը:

- Ընդունել հատուկ օրենք բանկերի միավորման մասին («բանկային ամուսնություն»), որը հնարավորություն կտա փոքր, բայց կենսունակ բանկերին կամավոր միավորվելու և տնտեսության մեջ բարձրացնելու բանկային սպասարկման դերը, հատկապես միջին և մեծ բիզնեսի միջինժամկետ ֆինանսավորման հարցերում:

- Սահմանել ավանդային հայտարարագրման բացառապես դրամական մեխանիզմ, որը հնարավորություն կտա ավանդներ ներգրավել միայն ՀՀ դրամով, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստված է, որ այդ գումարները ներմուծվել են արտասահմանից և գոյություն ունի համապատասխան մանքային հայտարարագիր: Սա կթուլացնի տնտեսության մեջ դոլարացման մակարդակը, որը տարբեր հաշվարկներով կազմում է 40-50%:

- Պետք է էապես բարելավել և խստացնել բանկային կառավարմանը վերաբերող մասնագիտական չափանիշները:

Համանման միջոցառումների համալիր իրականացումը, մեր գնահատմամբ, թույլ կտա խուսափելու հնարավոր բանկային ճգնաժամից, ինչի ծնվելու դեպքում մեր տնտեսության վնասը, համեմատած ՌԻ տնտեսության կրած վնասի որակական չափանիշների հետ, իր ընդգրկունությամբ կարող է լինել անհամեմատ աղետալի:

Յ. Յ. МАНУКЯН - К вопросу об упорядочении банковской системы.

Нынешняя ситуация в банковской системе РА тесно связана с экономикой страны. Сегодня примерно треть действующих в Армении банков находится на грани банкротства. В этих банках функционируют временные администрации, назначенные Центральным банком. По нашему мнению, для определения современной экономической политики и во избежание банковского кризиса необходимы перемены, которые бы максимально соответствовали настоящим экономическим критериям и уровню развития экономики. Осуществление в банковской системе изменений и корректировок позволит избежать весьма вероятного кризиса, который может нанести всеохватный экономический ущерб.

⁴ Տե՛ս Կ. Սարգսյան, ՀՀ բանկային համակարգի հետագա զարգացման անվտոգ որոշ հարցեր, ԼՂԼԿ, Տեսակետ, էջ 3:

⁵ Տե՛ս Է. Է. Մանուկյան, Կ. Ա. Գեորգյան, Փոխարժեքի կարգավորումը արտաքին առևտրում, «Էկոնոմիկա», № 10-12, 1997, էջ 37: